ABOUT HIV

Ընտանիքներ և երեխաներ

ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ կարող են ունենալ ընտանիք և երեխաներ, ովքեր առողջ են և ՄԻԱՎ բացասական: Նույնիսկ, եթե ձեր երեխան ապրում է ՄԻԱՎ-ով՝ ժամանակակից դեղամիջոցները շատ արդյունավետ են, և կարող են հնարավորություն տալ նրան ունենալու երկար և առողջ կյանք:



Ունենալ երեխա՝ առանց զուգընկերոջը վարակելու

Եթե դուք ցանկանում եք երեխա ունենալ ձեր զուգընկերոջից, բայց ձեզանից մեկը ՄԻԱՎ դրական է, մյուսը՝ բացասական, ապա անհրաժեշտ կցանկանաք դա անել այնպես, որ ՄԻԱՎ-ը չվոխանցվի առողջ զուգընկերոջը: ՄԻԱՎ-ի արդյունավետ բուժումը տալիս է դրա հնարավորությունը:

Որոշակի իրավիճակներում ՄԻԱՎ-ի փոխանցման հավանականությունը շատ ցածր է: Անպաշտպան սեռական հարաբերությունները՝ երեխա ունենալու նպատակով, համարվում են անվտանգ, եթե.

- ՄԻԱՎ դրական զուգընկերը ստանում է իր համար նախատեսված բուժումը
- Ավելի, քան վեց ամիս չի ունեցել վիրուսային ծանրաբեռնվածություն
- Նրանցից ոչ մեկը չունի սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (ՍՃՓՎ)
- Անպաշտպան սեռական հարաբերությունները տեղի են ունենում միայն ձվազատման օրերին

Որպես կանխարգելիչ քայլ, ՄԻԱՎ բացասական զուգընկերը կարող է ստանալ ՀՌՎ դեղամիջոցներ, այն օրերի ընթացքում, երբ ունենում է անպաշտպան սեռական հարաբերություններ (դա կոչվում է նախակոնտակտային կանխարգելում):

Եթե դուք կամ ձեր զուգընկերը ունեք նաև հեպատիտ C և մտածում եք երեխա ունենալու մասին, ապա խոսեք ձեր բժշկի հետ: Քանի որ, հեպատիտ C-ի բուժումը կարող է ներառել մի դեղամիջոց, որը կոչվում է Ռիբավիրին, որն էլ իր հերթին կարող է վնասել չծնված երեխային:

Մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում

Ամեն տարի, ՄԻԱՎ-ով ապրող հազարավոր կանայք ունենում են առողջ, ՄԻԱՎ բացասական երեխաներ: Առանց կանխարգելման՝ ՄԻԱՎ վարակը կարող է փոխանցվել երեխային, սակայն ճիշտ բուժման և խնամքի շնորհիվ, փոխանցման հավանականությունը կարող է հասցվել նվազագույնի:

Փոխանցումը հնարավոր է կանխարգելել, եթե.

- Ընդունել ՀՌՎ դեղամիջոցներ հղիության ընթացքում
- Կատարել լավ մտածված ընտրություն կեսարյան հատման և բնական ճանապարհով երեխա ունենալու միջև
- Ձկերակրել կրծքով
- Նորածնին տալ ՀՌՎ դեղամիջոցներ մի քանի շաբաթ շարունակ

ՀՌՎ դեղամիջոցների ընդունումը հղիության ընթացքում, նվազեցնում է վիրուսային ծանրաբեռնվածությունը, որպեսզի երեխան ավելի քիչ բանակությամբ վիրուսի հետ շփում ունենա ներարգանդային ժամանակահատվածում և ծննդաբերության ժամանակ՝ նվազեցնելով վարակման վտանգը: Բացի այդ, որոշ ՀՌՎ դեղամիջոցներ կարող են հասնել ընկերք, մտնել երեխայի օրգանիզմ, և կանխել վիրուսի բազմացման գործընթացը:

ՄԻԱՎ-ը փոխանցվում է նաև կրծքի կաթի միջոցով: Կաթնախարնուրդը ավելի ապահով է, եթե մաքուր ջուրը հասանելի է ձեզ: Այն կանայք, ովքեր նույնպես ապրում են ՄԻԱՎ-ով, կարող են ձեզ խորհուրդ տալ՝ ինչպես բացատրել ընտանիքին և ընկերներին, թե ինչու՞ կրծքով չեք կերակրում:

ՄԻԱՎ-ով ապրող տղամարդիկ, կարող են չանհանգստանալ ՄԻԱՎ վարակը իրենց երեխաներին փոխանցելու մասին, քանի դեռ մայրը ՄԻԱՎ բացասական է: Պաշտպանված սեռական հարաբերությունները շատ կարևոր են հղիության ընթացքում և կրծքով կերակրելիս, որպեսզի մայրը շարունակի ունենալ ՄԻԱՎ բացասական կարգավիճակ:

Հետազոտեք ձեր երեխաներին

Եթե դուք ՄԻԱՎ-ով ապրող կին եք, շատ կարևոր է, որ ձեր երեխաները հետազոտվեն ՄԻԱՎ-ի վերաբերյալ՝ մանավորապես երեխայի ծնվելու ժամանակ: Եթե դա ժամանակին չի արվել, միևնույնն է, անհրաժեշտ է կատարել հետազոտություն, անգամ, եթե երեխաները մեծ են և թվում է, թե առողջ են:

Հետազոտությունը կարող է հավաստիացնել ձեզ, որ ձեր երեխաները ՄԻԱՎ

www.pro-vich.info և www.about-HIV.info կայքերի ստեղծմանը մեծապես աջակցել է Janssen-ը: Վերոհիշյալ ֆինանսավորում տրամադրող կազմակերպությունը երկու կայքերից որևէ մեկի բովանդակության վրա խմբագրական որևէ ազդեցություն չի ունեցել: Այս կայքում ներառված ինֆորմացիան միտված է աջակցելու առողջապահական ներկայացուցչի պրոֆեսիոնալ խորհրդատվությանը և ոչ թե փոխարինելու այն: Ձեր կարգավիճակի վերաբերյալ խորհուրդ ստանալու համար անհրաժեշտ է դիմել ձեր բժշկին կամ առողջապահության ոլորտի այլ ներկայացուցչի:

Տեղեկատվական թերթիկները ստեղծվել են NAM aidsmap-ի, European AIDS Treatment Group-ի, Aids Action Europe-ի, East Europe & Central Asia Union of PLWH և ITPCru (The Treatment Preparedness Coalition)-ի համագործակցությամբ:Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել՝ www.about-hiv.info; www.pro-vich.info; www.aidsmap.com:
Մեծ Բրիտանիայում գրանցված բարեգործական կազմակերպություն: 1011220

ABOUT HIV

Ընտանիքներ և երեխաներ

չունեն: Այնուամենայնիվ, երբեմն, երեխան կարող է երկար տարիներ ապրել ՄԻԱՎ-ով, առանց ակնհայտ խնդիրներ ունենալու: Եթե ձեր երեխայի հետազոտման արդյունքները դրական են, ապա ՄԻԱՎ- ով ապրող մարդկանց աջակցող կազմակերպությունները կարող են օգնել ձեզ որոշելու, թե ինչպես տեղեկացնեք երեխային իր ախտորոշման մասին:

ՄԻԱՎ-ը երեխաների մոտ

Զգուշորեն հետևելով իրենց առողջությանը, ՄԻԱՎ-ով ապրող երեխաները կարող են ունենալ երջանիկ, առողջ և շնորհիվ ՀՌՎ դեղամիջոցների՝ երկար կյանք: Այս դեղամիջոցները շատ արդյունավետ են երեխաների համար և կարող են երկարաժամկետ կառավարելի դարձնել ՄԻԱՎ կարգավիճակը :

ՄԻԱՎ-ով ապրող երեխաների համար նախատեսված բժշկական ծառայությունները մասնագիտացված են: Նորածինների և երեխաների մոտ ՄԻԱՎ-ի զարգացման ուղիները տարբերվում են մեծահասակներից, հատկապես նրանով, որ երեխաների մոտ այդ զարգացումը ավելի արագ է տեղի ունենում: Ձեր երեխայի առողջությունը պետք է պարբերաբար վերահսկվի մասնագիտացված կլինիկայում:

ՄԻԱՎ-ով ապրող երեխաները կարիք ունեն որոշակի տեղեկություններ ստանալու իրենց հիվանդության մասին, բայց դա պետք է լինի շարունակական գործընթաց: Այն, թե ինչ դուք կասեք, կախված պիտի լինի երեխայի տարիքից, հասկացողության մակարդակից և իմանալու պատրաստակամությունից:

Դուք եք որոշում, ասե՞լ մյուս մարդկանց ձեր երեխայի կարգավիճակի մասին, թե՞ ոչ: Լավ կլինի լրջորեն մտածել այս հարցի շուրջ, մինչև որոշում կայացնելը:

Մինչ ձեր երեխան մեծանում է, նա կարող է որոշել, թե ու՞մ և ինչպե՞ս ասել: Բայց այս ամենն անելու համար, նրանք կարող են ձեր օգնության կարիքն ունենալ:

www.pro-vich.info և www.about-HIV.info կայքերի ստեղծմանը մեծապես աջակցել է Janssen-ը: Վերոհիշյալ ֆինանսավորում տրամադրող կազմակերպությունը երկու կայքերից որևէ մեկի բովանդակության վրա խմբագրական որևէ ազդեցություն չի ունեցել: Այս կայքում ներառված ինֆորմացիան միտված է աջակցելու առողջապահական հերկայացուցչի պրոֆեսիոնալ խորհրդատվությանը և ոչ թե փոխարինելու այն: Ձեր կարգավիճակի վերաբերյալ խորհուրդ ստանալու համար անհրաժեշտ է դիմել ձեր բժշկին կամ առողջապահության ուրիշ այլ հերկայացուցչի:

Տեղեկատվական թերթիկները ստեղծվել են NAM aidsmap-ի, European AIDS Treatment Group-ի, Aids Action Europe-ի, East Europe & Central Asia Union of PLWH և ITPCru (The Treatment Preparedness Coalition)-ի համագործակցությամբ:Հավելյալ տեղեկությունների համար կարող եք այցելել՝ www.about-hiv.info; www.pro-vich.info; www.aidsmap.com:
Մեծ Բրիտանիայում գրանցված բարեգործական կազմակերպություն: 1011220